ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Առաքելյան

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածով՝ Ձեզ եմ ներկայացնում առաջարկություն՝ Ազգային ժողովում 2025 թվականի հոկտեմբերի 21-ին շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» (Կ-1174-21.10.2025-ՏՀ-011/0) օրենքի նախագծի վերաբերյալ:

Առաջարկում եմ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 58.1-ին կետում «ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 870240 000, 8703 80 000 և 8711 60» ծածկագրերը փոխարինել «ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 870240 000, 8703 80 000, 8711 60 000 և 8704 60 000» ծածկագրերով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ:

. Բեռնատար տրանսպորտային միջոցներին բաժին է ընկնում ընդհանուր արտանետումների առավել մեծ մասնաբաժինը (CO_2, NO_x, փոշու մասնիկներ):

. Էլեկտրական բեռնատարների խթանումը կնվազեցնի արտանետումները, կնվազեցնի վառելիքի և սպասարկման ծախսերը և կբարձրացնի տեղական բիզնեսների մրցունակությունը:

. Առաջարկությունը համահունչ է նաև ՀՀ կառավարության կողմից արտանետումների կրճատման և կանաչ տնտեսության խթանման ուղղությամբ: ստանձնած միջազգային պարտավորություններին:

Միաժամանակ առաջարկում եմ վերանայել տրանսպորտային միջոցի ներմուծման համար նախագծով սահմանվող 2 տարվա սահմանափակումը և այն կիրառելի դարձնել 5 տարեկանից բարձր թողարկման տարեթիվ ունեցող մեքենաների համար, քանի որ հակառակ պարագայում արտնությունից կօգտվեն սոցիալապես ավելի ապահով խմբերը, մինչդեռ ԱԱՀ-ից ազատումը նախատեսված է ապրանքները մատչելի դարձնել միջին և ավելի ցածր եկամուտ ունեցող խմբերի համար:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ **ԼՈՒՍԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ**